



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2023 թվականի N 600

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ (ՀԱԼԱՔՅԱՆ) 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ
ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՎԻԿ ԴՈՒՐԱԽԱՆԻ ԷՎԻՆՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հիմք ընդունելով Հովիկ Դուրախանի Էվինյանի 26.01.2023 թվականի թիվ 02/1232 դիմումը, 25.05.1987 թվականին տրված տեղնիկական անձնագիրը, 29.12.2022 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի 5869 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20221228-84-6568317), 29.12.2022 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի 5868 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20221228-84-6568313), հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի 14.02.2023 թվականի շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-43/23 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Մար-Մոս» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի 24.10.2023 թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023XYQM3R, 2023ZF7JRD), և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Հալաբյան (Կուրդինյան) փողոց 23 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0.0405 հա և դրան կից 0.00602 հա մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1952-1992թթ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.04652 հա:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1 Ճանաչել Հովիկ Դուրախանի Էվինյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Հալաբյան (Կուրդինյան) փողոց 23 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար

անհրաժեշտ օրինական 0.0405 հա և դրան կից 0.00602 հա մակերեսներով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Հովիկ Դուրախանի Էվինյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Հալաբյան (Կուրդինյան) փողոց 23 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0.0405 հա և դրան կից 0.00602 հա մակերեսներով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Կ. Հալաբյան փողոց, 23 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 14
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 601

ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ս. ԶՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ 37/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՆԱՐԵԿ ԱՐՏԱԿԻ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ
ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ
ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ
ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարեկ Արտակի Խառատյանի 22.03.2023 թվականի թիվ 02/4564 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03032023-06-0044 վկայականը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698 որոշումով՝ որոշում եմ.

1. Տարանջատել Վանաձոր Վանաձոր քաղաքի Ս. Զորյան փողոց 37/1 հասցեում գտնվող, Նարեկ Արտակի Խառատյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և դրանով զբաղեցված հողամասը՝ համաձայն «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2. Վանաձոր Վանաձոր քաղաքի Ս. Զորյան փողոց 37/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 0.01701 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր ք., Ս. Զորյան փողոց, 37/1 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1).

բ) 0.01289 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն է Վանաձոր Վանաձոր ք. Ս. Զորյան փողոց, 37/2 հողամաս:

3. Հաստատել համայնք Վանաձոր, Վանաձոր քաղաք Ս. Զորյան փողոց 37/1 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 0,02990 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 17
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 602

ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 77/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՏԻԳՐԱՆ ԺԻՐԱՅՐԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Ժիրայրի Գալոյանի լիազորված անձ Վահրամ Խաչիկի Վանյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16032023-06-0040 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

- Փոխել Վանաձոր Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 77/1 հասցեում գտնվող գրասենյակի գործառնական նշանակությունը՝ հասարակականից՝ որպես բնակելի գործառնական նշանակությամբ շինություն՝ բնակարան:
- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքը հաշվառել բնակարանային ֆոնդում:
- Վանաձոր Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 77/1 հասցեում գտնվող գրասենյակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Տիգրան Մեծի պողոտա, 77 շենք, 50 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 603

ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ք Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 11 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՆԿՈՒՂԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուբիկ Հովհիկի Համբարյանի 03.02.2023 թվականի թիվ 1794 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20122022-06-0054 վկայականը, 26.12.2022 թվականի թիվ 5953 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20221223-2-6556659), անշարժ գույքին հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը/77120/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի փողոց 11 հասցեում գտնվող նկուղին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Գ. Նժդեհի փողոց, 11 շենք, 2 նկուղ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 17
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 604

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂ ԹԻՎ 2Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոհարիկ Գրիգորի Հարությունյանի, Դավիթ Վրոյրի Հարությունյանի 21.03.2023 թվականի թիվ 4505 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1883290 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման թիվ 84107 քաղվածքը, 21.03.2023 թվականի թիվ 1205 սեփականության իրավունքի վկայագիրը /նոտարական ակտի կոդ: 741-20230320-84-6768322/, 21.03.2023 թվականի թիվ 1206 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /նոտարական ակտի կոդ: 741-20230320-84-6768149/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝
որոշում եմ.

Վանաձոր քաղաքի Մաշտոցի փող, թիվ 2ա հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Մ. Մաշտոցի փողոց, 2/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 17
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 605

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Համասյայի Գրիգորյանի 28.03.2023 թվականի թիվ 5028 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 02092021-06-0038 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /85094/ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի գյուղ Գուգարքում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր ք., գյուղ Գուգարք, Քոթեջային 10-րդ փողոց, 30 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 17
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 606

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԴԱՐՊԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 29 (ՆԱԽԿԻՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 42) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԵՆ ՌԱԶՄԻԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ռազմիկի Աբրահամյանի (ծնված՝ 02.02.1978թ.) լիազորված անձ Աննա Սուլիկոյի Թադևոսյանի (ծնված 27.11.1981թ.) 01.02.2023 թ. թիվ 02/1622 դիմումը, 11.12.2020 թվականի թիվ 5107 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20201211-90-4839285), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 27.11.1984 թվականի թիվ 18 տեխնիկական անձնագիրը, 23.12.2022թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 8172 վկայագիրը (նոտարական ակտի կոդ:763-20221222-84-6553909) և ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 8171 վկայագիրը (նոտարական ակտի կոդ:763-20221222-84-6553899), 21.02.2023 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-47/23Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի 16.02.2023թ.հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023VPWXZU) և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնք, գյուղ Դարպաս 1-ին փողոց թիվ 29 (նախկին 2-րդ փողոց թիվ 42) հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0.07535հա մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1979-1991թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.07535հա:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Արմեն Ռազմիկի Աբրահամյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք գյուղ Դարպաս 1-ին փողոց թիվ 29 (նախկին 2-րդ փողոց թիվ 42) հասցեում գտնվող բնակելի

տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 0.07535 հա մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Արմեն Ռազմիկի Աբրահամյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք գյուղ Դարպաս 1-ին փողոց թիվ 29 (նախկին 2-րդ փողոց թիվ 42) հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 0.07535 հա մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր գյուղ Դարպաս, 1-ին փողոց, 29 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 17
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 607

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 31 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 559
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի 06.04.2023 գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-06042023-06-0156 գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի ղեկավարի 31 մարտի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի գյուղ Գուգարքում գտնվող բնակելի տանը նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 559 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման նախաբանում «քաղվածքը» բառից հետո «83404» թվերը փոխարինել «83705» թվերով:
2. Որոշման 2-րդ պարբերությունում «12 շենք» բառերից հետո «բնակարան» բառը փոխարինել «բնակելի տուն» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 17
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 608

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05 ՄԱՐՏԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 511-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդիկ Անուշավանի Մելքոնյանի 21.03.2023 թվականի թիվ 4528 դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 05 մարտի 2014 թվականի «Վանաձորի քաղաքապետի և Էդիկ Մելքոնյանի միջև կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 511-Ա որոշումը՝ լուծելով 2008 թվականի օգոստոսի 20-ին համայնքային սեփականության հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման թիվ 583 պայմանագիրը:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Չուխաջյան փողոց, թիվ 38/12 հասցեում գտնվող հողամասի վճարների վերահաշվարկ և վերջնահաշվարկ:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության անձնակազմի կառավարման բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 17
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 609

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-3 ԹԻՎ 58/5-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ԿԱՄՈ ԼԱՎՐԵՆՏԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կամո Լավրենտի Անտոնյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25092015-06-0032 վկայականը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 15.11.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022NVTQHГ), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ և 18-րդ կետի ա) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝

որոշում եմ.

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 58/5-1 հասցեում գտնվող, Կամո Լավրենտի Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 42.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 38.2 քմ) ավտոտնակը:

2. Փոխել Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 58/5-1 հասցեում գտնվող 0.0042հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3. Կամո Լավրենտի Անտոնյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 42.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 38.2 քմ) ավտոտնակի համար 82700 (ութսուներկու հազար յոթ հարյուր) դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4. Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 58/5-1 հասցեում հասցեում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս, 58/9 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 17
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 610

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 62Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22052012-06-0156 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 62ա հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Վարդանանց փողոց, 62/3 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 17
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 611

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գայանե Յուրիկի Ամիրխանյանի, Կարինե Յուրիկի Ամիրխանյանի, Սուսաննա Հրաչիկի Ամիրխանյանի 28.02.2023 թվականի թիվ 3207 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1855531 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը (80900), 23.02.2023 թվականի թիվ 971 սեփականության իրավունքի վկայագիրը (նոտարական կոդ: 763-20230222-84-6700835), 23.02.2023 թվականի թիվ 972 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (նոտարական կոդ: 763-20230222-101-6700832), 23.02.2023 թվականի թիվ 973 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (նոտարական կոդ: 763-20230222-84-6700841), 23.02.2023 թվականի թիվ 974 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (նոտարական կոդ: 763-20230222-84-6700838) ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Դեմիրճյան թիվ 2Գ հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Կ. Դեմիրճյան փողոց, 2/9 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 17
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 612

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍԱԿՈՎԻ ՓՈՂՈՑ 13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՐՃ
ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Պերճ Հովհաննեսի Տեր-Հարությունյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06102017-06-0034 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 19.10.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-177/22 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 31.07.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022JSRWJS), ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա), դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Իսակովի փողոց 13 հասցեում գտնվող, Պերճ Հովհաննեսի Տեր-Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 81.4քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը 71.0) բնակելի նշանակության շինությունները և ինքնակամ իրականացված թվով 3 ձևափոխումները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Պերճ Հովհաննեսի Տեր-Հարությունյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 81.4քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 188600 (հարյուր ութսունութ հազար վեց հարյուր) դրամ գումարը և թվով 3 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 6950 (վեց հազար ինը հարյուր հիսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 613

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԶՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ 4/1-1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՈՒՇ
ՎԱԼԵՐԻԱՆՏԻ ՇԱԽԿՅԱՆՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անուշ Վալերիանտի Շախկյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17122021-06-0016 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Զորյան փողոց 4/1-1/1 հասցեում գտնվող, Անուշ Վալերիանտի Շախկյանին սեփականության իրավունքով պատկանող 0.02հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
2. Փոխել Վանաձոր քաղաքի Զորյան փողոց 4/1-1/1 հասցեում գտնվող, Անուշ Վալերիանտի Շախկյանին սեփականության իրավունքով պատկանող 85.76քմ մակերեսով բնակելի տան գործառնական նշանակությունը՝ բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություն՝ հյուրանոց:
3. Վանաձոր քաղաքի Զորյան փողոց 4/1-1/1 հասցեում գտնվող գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ա. Զորյան փողոց, 4/1 հյուրանոց:
4. Շինությունների գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 614

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 54-50/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԱԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՊԱՎԵՆ ԳԵՎՈՐԳԻ ՉԱՏԻՆՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ապավեն Գևորգի Չատինյանի 08.11.2022 թվականի թիվ 14673 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման թիվ 13112019-06-0072 վկայականը, ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 43,1-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 54-50/1 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 19.6քմ մակերեսով մետաղական ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 20.0քմ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 10 տարի ժամկետով, տրամադրել Ապավեն Գևորգի Չատինյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Ապավեն Գևորգի Չատինյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, ավտոտնակի 1.0 քմ-ի համար ամսական վարձավճարի չափ սահմանելով 30(երեսուն) դրամ, իսկ հողամասի՝ 1.0քմ-ի համար ամսական 24 (քսանչորս) ՀՀ դրամ վարձավճարով, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 615

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ
ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԱՀԱՐՈՆ ՌԱՖԻԿԻ ՕՀԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ահարոն Ռաֆիկի Օհանյանի (ծնված՝ 07.12.1968թ.) լիազորված անձ Արմինե Ռոմիկի Խչոյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 04.04.1998թ. անճարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 001442 վկայականը, 21.06.2022թ. թիվ 2463 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20220621-79-6009367), «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, ՀՀ կադաստրի կոմիտեի 14.03.2023թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023R2QVHY) և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ստեփանյան փակուղի թիվ 7 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 495.0քմ և կից 57.5քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1970թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 552.5քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Ահարոն Ռաֆիկի Օհանյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ստեփանյան փակուղի թիվ 7 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 495.0քմ մակերեսով հողամասին կից 57.5քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Ահարոն Ռաֆիկի Օհանյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ստեփանյան փակուղի թիվ 7 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 552.5մ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ն. Ստեփանյան փողոց, 2-րդ փակուղի, 7 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 17
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2023 թվականի N 616

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԱՐՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 42 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԱՐՏԱԿ
ՋԱՆՎԵԼԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ
ՓՈՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սպարտակ Զանվելի Ալավերդյանի (ծնված՝ 30.03.1960թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, էլեկտրոնների գիայի վճարման անդորրագիրը, 14.05.2021թ. թիվ 2150 (նոտարական ակտի կոդ: 594-20210514-66-5106917) հայտարարությունը, ԱՐՏՅՈՒՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Սարոյան փողոցի թիվ 42 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 295.0քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1978թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 295.0քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1978թ.-ից:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

- Ճանաչել Սպարտակ Զանվելի Ալավերդյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Սարոյան փողոցի թիվ 42 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 295.0քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
- Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
- Վանաձոր քաղաքի Սարոյան փողոցի թիվ 42 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Սարոյան փողոց, թիվ 42/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2023 թվականի N 617

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի «ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԹԻՎ 71 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝
որոշում եմ.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 18-ի «Վանաձոր համայնքի 2023 թվականի գնումները հաստատելու մասին» թիվ 71 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 18
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2023 թվականի N 618

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-3 ԹԱՂԱՄԱՍ 10-3 ԵՎ ՏԱՐՈՆ -2 ՔՇՀ-3
ԹԻՎ 10 Ա ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԼԵՏ ԻՍԿԱՆԴԱՐԻ
ՄԵՋԼՈՒՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԽԱՆՈՒԹԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ
ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Իսկանդարի Մեջլումյանի 03.04.2023 թվականի թիվ 02/5273 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24072018-06-0040 և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1942564 վկայականները, 30.03.2023 թվականի թիվ 24 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698 որոշումով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս 10-3 և Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 10 ա հասցեներում գտնվող Համլետ Իսկանդարի Մեջլումյանին սեփականության իրավունքով պատկանող 0.00740 հա ընդհանուր մակերեսով հողամասը և 63.11 քմ ընդհանուր մակերեսով խանութը համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս, 10/1 խանութ:

3. Հաստատել Վանաձոր, Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս 10-3 և Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 10 ա հասցեներում գտնվող Համլետ Իսկանդարի Մեջլումյանին սեփականության իրավունքով պատկանող 0.00740 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2023 թվականի N 619

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Ս. ԶՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ 23Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոման Ռոբերտի Մինասյանի 13.03.2023 թվականի թիվ 3796 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02032023-06-0043 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը (82471), 06.03.2023 թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 934 պայմանագիրը / նոտարական ակտի կոդ: 741-20230301-60-6717792/ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Ս. Զորյան փողոց 23 ա հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ս. Զորյան փողոց, 23/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 18
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2023 թվականի N 620

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՍԵՐԳԵՅ ԳՈՒՄՐՈՒՅԱՆ ՄԻՀՐԱՆԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ՍԵՐԳԵՅ ԳՈՒՄՐՈՒՅԱՆ ՄԻՀՐԱՆԻ» 2023 թվականի ապրիլի 18-ի թիվ 01/6331 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**.

1. Բավարարել ք.Վանաձոր Տիգրան Մեծի պող. թիվ 34 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ՍԵՐԳԵՅ ԳՈՒՄՐՈՒՅԱՆ ՄԻՀՐԱՆԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Տիգրան Մեծի պող. թիվ 34 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 18
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2023 թվականի N 621

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 61-3/3 ՀՈՂԱՄԱՍԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ, ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հարություն Արմենի Հովհաննիսյանի 01.09.2022 թվականի թիվ 02/10454 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22122021-06-0036 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /55657/, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա, թիվ 61-3/3 հասցեի 0.001711 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողերից փոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի, իսկ շինության օգտագործման նպատակը մառանից՝ տաղավարի:

2. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 61-3/3 հասցեում գտնվող մառանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Տիգրան Մեծի պողոտա, 61/17 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 18
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2023 թվականի N 622

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 11-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9Ա ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԲԵՆ ԱՐԹՈՒՐԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուբեն Արթուրի Գասպարյանի (ծնված՝ 30.06.2014թ.) լիազորված անձ՝ Գայանե Գառնիկի Պողոսյանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 30.06.2021թ. տրված թիվ 3024 (նոտարական ակտի կոդ: 763-20210630-90-5205934) լիազորագիրը, 07.08.2017 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2927 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20170806-84-1576853), 03.07.2021թ. ըստ կտակի ժառանգության իրավունքի 5791 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20211102-84-5493771), 06.08.2017թ. ՀՀ արդարադատության նախարարության Վանաձոր նոտարական տարածքի թիվ 2926 նոտարական ակտը (նոտարական ակտի կոդ: 763-20170806-153-1576849), 03.08.1981թ. տրված գույքային թերթը, 10.10.2022թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված ՎՆ 1-165/22 Ի շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 14.06.2022 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022Y4FDQB), «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի գյուղ Գուգարք 11-րդ փողոց թիվ 9ա հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1260.0քմ և կից 14.2քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1320.3քմ, որից 92.2քմ մակերեսով հողամասը գտնվում է ընդհանուր օգտագործման տակ (Ճանապարհ): Ռուբեն Արթուրի Գասպարյանի բաժնեմասը կազմում է 1274.2քմ (1320.3-92.2:2): Անհատական բնակելի տունը կառուցվել է 1981-1990թթ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1320.3քմ:

